ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2792-Ա « 29 » մայիսի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԵՆՔԵՐԻՑ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԱՎՏՈՄԱՏ ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՂ ՍԱՐՔԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «Իզի Փեյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Սեդա Պետրոսյանի դիմումը և ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի հ.249-Ն որոշման հավելվածով՝

1.«Իզի Փեյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ Երևան համայնքի վարչական տարածքում շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու նպատակով 2026 թվականի մայիս ամսվա համար տրամադրել Երևան քաղաքի Շիրազի փողոցի հ.22, Մազմանյան փոոցի հ.8/5, 16-րդ թաղամաս հ.24, Բեկնազարյան փողոցի հ.3, Օրբելի եղբայրների փողոցի հ.67/2, Կոմիտասի պողոտայի հ.հ.11, 55, Ն. Տիգրանյան փողոցի հ.27, Բաբայան փողոցի հ.39 հ.1Ա, Մամիկոնյանց փողոցի հ.հ.25, 34Գ, 27, Վրացական փողոցի հ.8, Դավթաշեն 1-ին թղմ. 7/2, Դ.Բեկի փողոցի հ.հ. 84, 106/4, Արցախի պողոտայի հ.18/146, Սարի թաղ 1-ին փողոցի հ.10-1, Գ. Մահարի փողոցի հ.հ. 37/3, 127/10, Էրեբունի փողոցի հ.հ. 22, 29, Սարի թաղ 9-րդ փողոցի հ.22, Խաղաղ Դոնի փողոցի հ.16, Մաշտոցի պողոտայի հ.40Ա, Խորենացի փողոցի հ.հ.10, 25/4, Արգիշտիի փողոցի հ.11/3, Նալբանդյան փողոցի հ.59/10, Քրիստափորի փողոցի հ.2, Ամերիկյան փողոցի հ.105, Օհանովի փողոցի հ.հ. 26, 31/3, Ա.Բաբաջանյան փողոցի հ.121/2, Շերամի փողոցի հ.115/3, Սաֆարյան փողոցի հ.5/1, Գյուլիքևխյան փողոցի հ.23/5, Կ. Ուլնեցի փողոցի հ.59/8, Բագրատունյաց փողոցի հ.հ.12, 18, Նորագավիթ 12-րդ փողոցի հ.53, Շիրակի փողոցի հ.հ.25Ա, 16/2, Տարոնցու փողոցի հ.հ. 7, 16, Ն.Շենգավիթ 11 փողոցի հ.35, Ս.Տարոնցի և Մայիսի 9 փողոցների խաչմերուկ, Արշակունյաց պողոտայի հ.119/2 և Գ.Նժդեհի փողոցի հ.13 հասցեների դիմաց թվով 49 ավտոմատ ինքնասպասարկող սարքի տեղադրման թույլտվություն:

2.Ընդունել ի գիտություն, որ ավտոմատ ինքնասպասարկող սարքերի տեղադրման թույլտվության մայիս ամսվա համար սահմանված տեղական վճարը վճարված է, իսկ ընթացիկ տարվա հաջորդ ամիսների համար տեղական վճարի գումարը վճարված լինելու դեպքում՝ թույլտվությունը համարվում է երկարաձգված:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետին՝ իրականացնել հսկողություն սույն որոշման 1-ին կետում նշված «Իզի Փեյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործունեության ընթացքում Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 249-Ն որոշման պահանջների կատարման նկատմամբ:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետի վրա:

5.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

6.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ
ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246